ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ*
հայցորդ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
asatryan.armen@inbox.ru
0009-0004-5360-1245
DOI: 10.54503/1829-4073-2025.3.88-96

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊՍ. ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1921–1927 ԹԹ.)

Ամփոփում

Վիրահայոց թեմի պատմության մեջ աստվածահաճո գործունեությամբ իր մեծ դերակատարությունն է ունեցել Գևորգ արքեպս. Չորեքչյանը: 1921 թ. աշնանը նշանակվելով Վիրահայոց թեմի առաջնորդ, Գևորգ արքեպս. Չորեքչյանը ձեռնամուխ է լինում լուծելու Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո թեմի առջև կուտակված բազում խնդիրներ: Իշխանությունների կողմից պետական մակարդակով սկիզբ առած հակաեկեղեցական պայքարի շրջանում թեմակալը բազմաթիվ գրություններ ու խնդրագրեր է ուղղել Վրաստանի պատկան մարմիններին, դեմ արտահայտվելով եկեղեցիների փակմանը: Թեմակալը իշխանությունների առաջ մշտապես հարց է բարձրացրել թեմի վանքերի և եկեղեցիների իրավունքները պահպանելու և վերաբացելու կարևորության մասին:

Բանալի բառեր՝ *Գևորգ արքեպս. Չորեքչյան, Վիրահայոց թեմ, Վրաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գերագույն Հոգևոր խորհուրդ, եկեղեցի, վանք:*

Ներածություն

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել Վիրահայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպս. Չորեքչյանի թեմակալության առաջին շրջանի գործունեությունը: 1921 թ. Վիրահայոց թեմի առաջնորդ Մխիթար եպս. Տեր-

* *Հոդվածը ներկայացվել է 25.11.25, գրախոսվել է 30.11.25, ընդունվել է տպագրության 19.12.2025:*

© 2025 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

Մկրտչյանին փոխարինում է Գևորգ արքեպս. Չորեքչյանը[1]: 1921 թ. Գևորգ սրբազանը որպես կաթողիկոսի ներկայացուցիչ մեկնում է Թիֆլիս՝ Վրաստանի հայոց թեմի եկեղեցական գործերը կարգավորելու համար և նույն տարվա աշնանը նշանակվում է Վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ, իսկ 1922 թ. ընտրվում է նույն թեմի առաջնորդ:

Գևորգ եպս. Չորեքչյանը՝ Վիրահայոց թեմի առաջնորդ

Գևորգ եպս. Չորեքչյանի համար չափազանց կարևոր մի ժամանակաշրջան է համարվել Վիրահայոց թեմի առաջնորդությունը՝ իր բարդ ու դժվարին պայմաններով: 1923 թ. մայիսի 9-ին նա Հայոց Գևորգ Ե. կաթողիկոսին մանրամասն տեղեկացրել է ստեղծված իրավիճակի մասին: Իսկ իրավիճակը հետևյալն էր. Վրաստանում սկսվել էր պայքար կրոնի, եկեղեցու և հոգևորականության դեմ, և դրան աջակցում էին պետական շատ մարմիններ՝ օգտագործելով զանազան միջոցներ: Տեղական լրագրերը, այդ թվում՝ նաև «Заря Востока» թերթը մեծ աջակցություն էին ցուցաբերում կառավարությանը: Այս թերթի համարյա բոլոր համարներում տպագրվում էին առաջնորդող հակակրոնական հոդվածներ՝ հավատացյալներին մոլորեցնելու նպատակով: Քարոզիչները, շրջելով գյուղեր ու քաղաքներ, գումարում էին ժողովներ, որտեղ քարոզում էին կրոնի, եկեղեցու և հոգևորականության վնասակարության մասին:

Հոգևորականությանը և նրանց աջակցող մարդկանց հրավիրում էին կոմիսարիատներ և պահանջում թողնել իրենց սպասավորությունը՝ սպառնալով զրկել սեփականությունից: Համաձայնվողներին վարձատրում էին դրամական մեծ պարգևներով: Եղել են շատ դեպքեր, որ ընդդիմացող քահանաներին մի քանի օրով բանտարկել են: Այս բոլորի հետևանքով շատ քահանաներ հրաժարվում էին իրենց կոչումից և սքեմից՝ այդ մասին հայ-

[1] Գևորգ արքեպս. Չորեքչյանը թեմի առաջնորդ է եղել 1921–1927 և 1936–1938 թթ.: Ծնվել է 1869 թ. դեկտեմբերի 2-ին, Նոր Նախիջևանում: Նախնական կրթությունը ստացել է տեղի սեմինարիայում: 1887 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որի լրիվ դասընթացն ավարտվել է 1889 թ. և նույն տարում ստացել սարկավագության աստիճան: 1917թ. ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան: Նույն թվի ապրիլին ձեռնադրվում է եպիսկոպոս: 1925 թ. ստացել է արքության աստիճան: Մեծագործ հայրապետը ինը տարի գահակալելուց հետո վախճանվել է 1954 թ. մայիսի 9-ին: Մանրամասն տե՛ս «Էջմիածին», 1992, դեկտեմբեր, էջ 30–31, տե՛ս նաև Երջանկահիշատակ Տ.Տ. Գևորգ Զ. կաթողիկոսի կյանքը և գործունեությունը, 1955, **Մադոյան** 2011, **Ստեփանյանց** 1994, **Մանուկյան** 1997):

տարարելով տարբեր լրագրերում: Նույն պատճառներով իրենց պաշտոնավարությունից հրաժարվում էին նաև երեցփոխներն ու հոգաբարձուները, դպիրներն ու ժամկոչները: Այսպիսի դեպքեր շատ են եղել հատկապես գավառներում և գյուղերում:

Թեմում պաշտոնապես փակվել էին բազմաթիվ եկեղեցիներ՝ Գորիի, Սուրամի, Բաթումի և Թելավիի երեք եկեղեցիները, Շուլավերի երկու եկեղեցիները, Ախալցխայի Ս. Փրկիչը, Վաղա, Ալ, Դերբ, Ռուիս, Վելիսցիխե, Բուռնաշեթ, Ղզլքիլիսե և այլ գյուղերի հայոց եկեղեցիները:

Թեմի առաջնորդ Գևորգ եպս. Չորեքչյանն այդ ծանր և պատասխանատու ժամանակաշրջանում չի խնայել ոչ մի ջանք իր ժողովրդին և եկեղեցուն աջակցելու համար: Նա բազմաթիվ գրություններ ու խնդրագրեր է ուղղել Վրաստանի պատկան մարմիններին: Պետք է նշել, որ պետական ճնշումն այնքան մեծ էր եկեղեցու վրա, որ անհնարին էր պայքարել այդ բոլորի դեմ: Ահա այսպիսի պայմաններում է Վիրահայոց թեմի առաջնորդությունը ստանձնել Գևորգ եպս. Չորեքչյանը:

1923 թ. աշնանը Վրաստանի կառավարությունը հայտարարում է եկեղեցական համայնքները ցուցակագրելու և եկեղեցական կանոնադրություն մշակելու անհրաժեշտության մասին: Դրա կատարման համար տրվում է շատ կարճ ժամանակամիջոց՝ երկու շաբաթ: Նոյեմբերի 13-ին Գևորգ եպիսկոպոսի հրավերով առաջնորդարանի դահլիճում կայանում է Թիֆլիսի հայոց եկեղեցիների համայնքների ներկայացուցիչների ընդհանուր ժողով, որտեղ նա հայտնում է, որ Վրաստանի խորհրդային իշխանությունը պահանջում է բոլոր կրոնական համայնքների մանրամասն ցուցակագրությունը և կանոնադրությունը: Եվ այն համայնքները, որոնք նշանակված օրը չեն կատարի այդ պահանջը, կհամարվեն անվավեր: Հաշվի առնելով, որ երկու շաբաթվա ընթացքում անհնարին էր կառավարության պահանջը կատարել՝ թեմի առաջնորդի խնդրանքով այդ ժամանակը երկարացվում է[2]:

Ունենալով սերտ կապ Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի և Վեհափառ Հայրապետի հետ, Գևորգ եպս. Չորեքչյանը պարբերաբար մանրամասն զեկուցագրերով տեղեկացնում էր նրանց թեմական գործերի մասին: Այսպես, 1923 թ. դեկտեմբերի 27-ին նա Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդին է ուղարկում մի մանրամասն զեկուցագիր թեմական հարցերի մասին՝ ներկայացնելով թեմում տիրող ծանր տնտեսական, բարոյական և

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 3, գ. 524, թ. 15:

ֆինանսական վիճակը, միաժամանակ տեղեկացնելով, որ մտադիր են դիմել տեղի հայ համայնքին՝ կամավոր հանգանակություն կազմակերպելու համար, մինչև կկարգավորվեն թեմական գործերը. «Խորհուրդս վստահ է, որ հայ հասարակութիւնը, յիշեալ հաստատութեանց անհրաժեշտութիւնը զգալով, սիրով ընդառաջ կերթայ այս առաջարկին եւ չի զլանայ իր ջերմ օժանդակութիւնը՝ ազատելով այդ հաստատութիւնները փակման վտանգից: Հանգանակութիւնը վաւերացրած տետրակներով կը կատարուի խորհրդից ընտրուած յատուկ յանձնաժողովի ձեռքով: Սոյն տետրերը յանձնուած են քաղաքացիներ Բախչինեան Գէորգին, Աբրահամեան Ասատուրին, Մուշկամբարեան Հայրապետին, Աֆրիկեան Լևոնին, Շատախցեան Յովհաննէսին, Աֆրիկեան Գէորգին (Գլախօ), Տէր-Սիմոնեան Պօղոսին, Տէր-Յարութիւնեան Մէջլումին, Ղամբարեան Հայրապետին, Քոբալեան Ալէքսանդրին (Սանդրօ) և Աջէմեան Մկրտչին»[3]:

Հարկ է նշել, որ Վրաստանում իշխանությունները հայկական եկեղեցիները փակելու յուրահատուկ ուղի ընտրեցին: 1924 թ. հուլիսի 9-ին Արդարադատության և Ներքին գործերի ժողկոմները հրահանգ ընդունեցին կրոնական համայնքների գրանցման վերաբերյալ: Այդ հրահանգի 5-րդ կետի համաձայն՝ Թիֆլիս, Քութայիս, Բաթում և Սուխում քաղաքների կրոնական համայնքները պետք է, որպես կանոն, ունենային 1500-ից ոչ պակաս, իսկ հայերի համատեղ բնակության մյուս վայրերում՝ 300-ից ոչ պակաս ծուխ: Ինչպես Ստ. Ստեփանյանցն (Կերտող) է գրել «Այս հրահանգը անհեթեթություն էր և մեռելածին, քանի որ հայ հավատացյալների թիվը, ասենք, միայն Քութայիսի քաղաքում 600-ից չէր անցնում: Հրահանգի համաձայն՝ քաղաքներում բնակվող հայերը եկեղեցական համայնքի իրավունքից զրկվում էին»[4]: Այդ առումով Վիրահայոց թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը Վրաստանի Կենտգործկոմին ուղղված իր բողոքում նշել է. «Հրահանգի կիրարկման պատճառով Հայ լուսավորչական եկեղեցիները Վրաստանի սահմաններում կփակվեն, և հավատացյալ զանգվածները կզրկվեն հավատքը դավանելուց իրենց եկեղեցու ծեսերով»[5]:

Առաջնորդը Կենտգործկոմի ուշադրությունն էր հրավիրում այն փաստին, որ ինքը ծանոթ է Համ(բ)Կ 13-րդ համագումարի որոշումներին: Իսկ Վրաստանի Կենտգործկոմը 1924 թ. նոյեմբերի 21-ին ընդունել էր № 124

[3] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 6:

[4] **Ստեփանյանց** 1994, 46:

[5] Նույն տեղում:

որոշումը, որտեղ գրված էր. «ա) Վերացնել կրոնական համայնքների և ՎԽՍՀ քաղաքացիների կրոնական պաշտամունքի ազատ կատարման վրա սամանափակումներ դնող այժմ գործող բոլոր որոշումները, հրահանգները և վարչական կարգադրությունները, բ) ՎԽՍՀ քաղաքացիները օգտագործման համար կարող են ստանալ վանքերն ու իրենց հավատքի աղոթատները, կրոնական ծիսակատարությունների համար նախատեսված գույքը, այդ նպատակով կազմավորելով կրոնական համայնքներ՝ յոթից ոչ պակաս հիմնադիրներով, գ) այն հիմնարկություններն ու անձինք, որոնք, ինչ գնով էլ որ լինի, եթե արգելում են եկեղեցիների, աղոթատների և այլնի բացմանը, կամ թույլ են տալիս հոգևորականների հետապնդում՝ ծիսակատարությունների համար, պատասխանատվության կենթարկվեն որպես իշխանազանցներ»[6]:

1924 թ. հունվարի 10-ին թեմի առաջնորդ Գևորգ եպս. Չորեքչյանը զեկուցագիր է ներկայացրել Ամենայն Հայոց կաթողիկոսին և Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդին՝ թեմի եկեղեցիների վերաբացման դեկրետի և առկա դժվարությունների մասին՝ լրացուցիչ ներկայացնելով նաև մի քանի բացատրական հրահանգներ, որոնք ավետում էին եկեղեցիների վերաբացումն ու պաշտամունքային ազատությունը Վրաստանի հանրապետության սահմաններում: Փաստն այն էր սակայն, որ եկեղեցիները վերաբացվում էին մեծ դժվարությամբ: Փակված եկեղեցիներից[7] Թիֆլիսում վերաբացվել էին միայն յոթը, իսկ մյուսները, որոնք վերածվել էին պետական կամ հասարակական հաստատությունների, դժվարությունների առաջ էին կանգնել, քանզի վաճառվել էր դրանց պատկանող գույքն ու կահույքը՝ դժվարացնելով եկեղեցիների վերադարձը: Թիֆլիսի երեք եկեղեցիներ գտնվում էին այդ կարգավիճակում, և դրանց վերաբացումը մերժվել էր Քաղաքային գործադիր կոմիտեի կողմից, որի իրավունքը չուներ:

Զեկուցագրով դիմելով Վեհափառին՝ Վիրահայոց թեմի առաջնորդը, ներկայացնելով թեմում եկեղեցիների վերաբացման խնդրում եղած դժվարությունները, գրում է. «Ցաւով պիտի ասեմ, որ ենթադրութիւններս ճշտւում են. այն եկեղեցիները, որոնք յանձնուած են եղել բանւորութեան եւ կամ գործկոմների տրամադրութեան տակ գտնուել՝ ցարդ եւ ոչ մէկը բացւել է... Դիմումներ արել են կենտրոնական իշխանութեան՝ Բաթումի եկեղեցու, Ախալցխայի մայր եկեղեցու, Շուլավէրի մայր եկեղեցու, Թելաւի մայր եկեղե-

[6] Նույն տեղում, տե՛ս նաև **Վիրաբյան, Ավագյան** 2009, 103:

[7] 1924 թ. դրությամբ թեմում փակված էր 41 հայկական եկեղեցի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3144, թ. 4):

ցու, Տփխիսի Թանդոյեանց Ս. Աստուածածնի, Կուկիոյ Նորաշէնի Ս. Աստուածածնի և Ս. Մինաս եկեղեցիների համայնքները: Մերժողական պատասխան ստացել է միայն Շուլավէրի համայնքի ներկայացուցիչը, այն էլ բանաւոր, որ, ինձ թվում է, թիւրիմացութեան հետեւանք է, եւ որ կը պարզուի, երբ պատասխանը գրաւոր խնդրուի: Միւս եկեղեցիներից Թելաւի մայր եկեղեցին վտանգի մէջ է[8], քանի որ տեղական իշխանութիւնը, հակառակ կենտրոնի հրամանին, ձեռնարկելու է քանդման, իբր թէ քաղաքի բարեզարդութեան նպատակների համար: Միջոցներ առնուած են խանգարելու այդ ծրագիրը: Մերժման դէպքում՝ բոլոր համայնքները որոշել են դիմել Համառուսական Միութեան գործկոմին՝ Մոսկուա: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Հանրապետութեանց Միութեան գործկոմի այս նստաշրջանի ժողովները Տփխիսումն է, որի աւարտումից յետոյ (վեց-եօթն օրից) ԽՍՀՄ Սովնարկոմի եւ գործկոմի նախագահները՝ Ռիկովն ու Կալինինը, պիտի այցելեն Երեւան, գուցէ եւ Ս. Էջմիածին: Մեր խոնարհ կարծիքով գուցէ եւ յարմար առիթ է, որ Ձերդ Վեհափառութեան ներկայացուցիչները տեսակցեն նորա հետ եւ՝ ի միջի այլ հարցերի, նաեւ այս հարցի մասին խօսեն»[9]:

Իշխանությունները փակում էին ոչ միայն ծխական եկեղեցիները, այլ նաև պատմական և հնագիտական վանքերը, որոնք Վրաստանի տարածքում բավական շատ էին: Անդրադառնալով այս խնդրին, 1924թ. ապրիլի 7-ի զեկուցագրում, որն ուղղված էր Մայր Աթոռին, Վիրահայոց թեմի առաջնորդը խոսում է այդ վանքերի իրավունքները պահպանելու խնդրի կարևորության և արդիականության մասին: Նա նշում է, որ դիմել է պատկան մարմիններին՝ հող ստանալու խնդրանքով, ինչպես վարվել էին Տաթևի, Գեղարդի և այլ նշանավոր վանքերի վանահայրերն ու կառավարիչները: Սակայն պարզվել է, որ Վրաստանի Հանրապետության դեկրետներով և հրահանգներով նախատեսված չէ վանքերին հող հատկացնել: Տեղի իրավաբանների հետ խորհրդակցելով՝ պարզ է դառնում, որ վրացական կառավարությունը չունի հատուկ կարգադրություններ պատմական հնագիտական հուշարձանների վերաբերյալ, ինչպես դա արվել է Հայաստանի Հանրապետությունում: Ընդհակառակն, Վրաստանի օրենքներն ի վնաս հուշարձանների են. դրանք անցնում են տեղական իշխանությունների տնօրինության տակ: Թեմի առաջնորդը նկարագրել է նաև հինավուրց Թելեթի և Շավանաբաթի վանքե-

[8] Տե՛ս 1924 թ. ապրիլին իշխանության կողմից քանդվել է Թելավի մայր եկեղեցու զանգակատունը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3144, թ. 5):

[9] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3145, թ. 21, տե՛ս նաև «Էջմիածին», ԺԱ, 2009, 114–115:

րի դրության մասին, որոնք դասվել էին վանական եկեղեցիների շարքը, և դրանով պահպանվել էր նրանց գոյությունը. «Շաւնաբաթը երեք դեսեատին հող ունէր, որ ժողովրդին է անցել, իսկ Թելէթը միայն ամարանոցային շէնքեր ունի, որ տեղական իսպոլկոմն է օգտագործում եւ միայն բազմաթիւ կռիւներով հնարաւոր է եղել պահպանել վանահօր բնակարանը եւ ուխտաւորների ընդհանուր սրահը, չնայելով, որ յաջողուեց ինձ Ներքին գործերի կոմիսարին հրատարակել տալ ժամանակաւոր շրջաբերական, որով վանքերի եւ եկեղեցիների գաւիթների շէնքերը յանձնւում են նոցա հոգեւոր ներկայացուցիչներին»[10]:

Շատ սերտ էր կապը Վիրահայոց թեմի և Մայր Աթոռի միջև: Բոլոր հարցերի և դժվարությունների մասին առաջնորդն անվերապահորեն զեկուցում էր Գերագույն Հոգևոր խորհրդին, հաշվի առնում նրանց կարծիքը և համարժեք լուծում տալիս առաջացած խնդիրներին: Այսպես, ապրիլի 10-ին դարձյալ զեկուցագիր է ներկայացվում Ս. Էջմիածնին, որում Գևորգ եպիսկոպոսը հանգամանորեն ներկայացնում է եկեղեցական բարենորոգումների հետ կապված խնդիրները: Դրանք վերաբերում էին ժամագրքի, ծիսարանի, ճաշոցի և տոնացույցի կրճատմանը և բարեփոխությանը, սքեմի փոփոխության, հոգևորականության ապահովության և այլ խնդիրներին, որոնք քննարկվել էին նաև Վրաստանի Թեմական խորհրդի նիստում և ուղարկվել շրջանների գործակալներին՝ տեղերում դրանք քննարկելու համար: Անձամբ թեմի առաջնորդը դեմ չէր վերը նշված բարեփոխումներին, սակայն նրա կարծիքով հարկավոր էր դրանք լուրջ ուսումնասիրել և ապա վերջնական վճիռ կայացնել, որը կարող էր որոշել միայն Ս. Էջմիածինը[11]:

Եզրակացություն

Այսպիսով, Գևորգ արքեպս. Չորեքչյանի առաջնորդության առաջին շրջանը (1921-1927 թթ.) համընկնում է Վիրահայոց թեմի ամենածանր տարիների հետ: Ուստի այս պայմաններում թեմակալը ջանք ու եռանդ չի խնայել թեմի արդյունավետ գործունեությունը պահպանելու ուղղությամբ: Չնայած առկա դժվարություններին, թեմի առաջնորդ Գևորգ եպս. Չորեքչյանը մեծ եռանդով ու պատրաստակամությամբ էր լծվում ցանկացած խնդրի լուծմանը: նա մտադիր էր գումարել Վիրահայոց եկեղեցական պատգամավո-

[10] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3138, թ. 6 և շրջ., տե՛ս նաև «Էջմիածին», ԺԱ, 2009, 110–111:

[11] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3133, թ. 7 և շրջ., տե՛ս նաև «Էջմիածին», ԺԱ, 2009, 111–112:

րական ժողով, որտեղ պետք է քննարկվեին եկեղեցիների բարեզարդության խնդիրը և քահանայական շատ հարցեր, որոնք պետք է հավատացյալ ժողովրդին էլ ավելի կապեին մայր եկեղեցու հետ[12]: 1927 թ. Գևորգ արքեպս. Չորեքչյանը վերադառնում է Մայր Աթոռ և ընտրվում Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երջանկահիշատակ Տ.Տ. Գևորգ Զ. կաթողիկոսի կյանքը և գործունեությունը, 1955, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 181 էջ: *(Yerjankahishatak T.T. Gevorg Z. kat'voghikosi kyank'y yev gortsuneut'yuny, Mayr At'vorr S. Ejmiatsin, 1955, 181 ej): The life and activities of His Holiness Catholicos Gevorg Z., Mother See of Holy Etchmiadzin, 1955, 181 pp. (in Armenian).*

Էջմիածին, ԺԱ, 2009, էջ 114–115: *(Etchmiadzin", 11th, 2009, pp. 114–115). Ejmiatsin», ZHA, 2009, ej 114–115. (in Armenian).*

ՀԱԱ, ֆ. 57, g. 3, գ. 524, թ. 15: *(HAA, fond 57, cowcak 3, gorc' 524, t. 15). HAA, f. 57, c. 3, c. 524, t. 15:*

ՀԱԱ, ֆ. 148, g. 1, գ. 6: *(HAA, fond 148, cowcak 1, gorc' 6). HAA, f. 148, c. 1, c. 6:*

ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3144, թ. 4: *(HAA, fond 409, cowcak 1, gorc' 3144). HAA, f. 409, c. 1, c. 3144, t. 4:*

ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3145, թ. 21: *(HAA, fond 409, cowcak 1, gorc' 3145, t. 21). HAA, f. 409, c. 1, c. 3145, t. 21:*

ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3138, թ. 6: *(HAA, fond, 409, cowcak 1, gorc' 3138, t. 6). HAA, f. 409, c. 1, c. 3138, t. 6:*

ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3133, թ. 7: *(HAA, fond 409, cowcak 1, gorc' 3133, t. 7). HAA, f. 409, c. 1, c. 3133, t. 7:*

Մադոյան Ա. 2011, Գէորգ Զ. Չորեքչեան, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ., Ս. Էջմիածին, 192 էջ: *(**Madoyan A.** 2011, Georg Z. Ch'vorek'ch'ean, «Mayr At'vorr S. Ejmiatsin hrat.», S. Ejmiatsin, 192 ej). **Madoyan A.** 2011, Kevork Z. Chorekchian, "Mother See of Holy Etchmiadzin Publishing House", Holy Etchmiadzin, 192 pp. (in Armenian).*

Հայ Առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930–1938 թթ., 1997, կազմեց՝ **Մանուկյան Ա**. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), «Ամրոց» հրատ., Երևան, 284 էջ: *(Hay Arrak'elakan yekeghets'u brrnadatvats hogevorakannery 1930–1938 t't'., 1997, kazmets', **Manukyan A.** (yst PAK-i p'astat'ght'eri), «Amrots'» hrat., Yerevan, 284 ej). The Repressed Clergy of the Armenian Apostolic Church 1930–1938, 1997, compiled by **Manukyan A.** (according to KGB documents), "Amrots" Publishing House, Yerevan, 284 pp. (in Armenian).*

Ստեփանյանց Ստ. (Կերտող). 1994, Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, «Ապոլոն», հրատ., 244 էջ: *(**Step'anyants' St.** (Kertogh). 1994, Hay Arrak'elakan yekeghets'in stalinyan brrnapetut'yan orok', «Apolon», hrat.»,*

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 306:

Yerevan, 244 ej). ***Stepanyants St.*** *(Author): 1994, The Armenian Apostolic Church during the Stalinist dictatorship, "Apollon", publishing house, Yerevan, 244 pp. (in Armenian).*

Վիրաբյան Ա., Ավագյան Գ. 2009, Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը Վիրահայոց թեմի առաջնորդ (փաստաթղթեր), «Էջմիածին», ԺԱ, էջ 102–121. *(**Virabyan A., Avagyan G.** 2009, Gevorg ark'episkopos Ch'vorek'ch'yany Virahayots' t'emi arrajnord (p'astat'ght'er), «Ejmiatsin», ZHA, ej 102–121).* ***Virabyan A., Avagyan G.*** *2009, Archbishop Gevorg Chorekchyan, Primate of the Armenian Diocese of Georgia (documents), "Echmiadzin", 11, pp. 102–121. (in Armenian).*

ARMEN ASATRYAN

Institute of History, NAS RA

asatryan.armen@inbox.ru

0009-0004-5360-1245

THE FIRST PERIOD OF ARCHBISHOP GEVORG CHOREKCHYAN'S TENURE OF THE GEORGIAN-ARMENIAN DIOCESE (1921–1927)

Summary

The first period of Archbishop Gevorg Chorekchyan's tenure (1921–1927) coincided with the most difficult years for the diocese of Georgian Armenians. The head of the diocese spared no effort or energy in maintaining the effective functioning of the diocese. He approached the resolution of any issues with great zeal and willingness. Chorekchyan intended to convene a church council of representatives from the diocese of Georgian Armenians, where matters of church decoration, as well as many issues concerning clergy, were to be discussed, aiming to more closely connect the faithful people with their native church. In 1927, Archbishop Gevorg Chorekchyan returned to the Mother See of Etchmiadzin and was elected a member of the Supreme Spiritual Council.

Keywords: *Archbishop Gevorg Chorekchyan, diocese of Armenians in Georgia, Georgia, Mother See of Holy Etchmiadzin, Supreme Spiritual Council, church, monastery.*